ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի
Բերդ համայնք, ք. Բերդ Լ. Բեկի 5, հեռ. /0267/ 2-10-81
berdhamaynq@mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ

## 20 ՀՈՒՆՎԱՐԻ 2015 ԹՎԱԿԱՆ N 1-Ն

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի N 54-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով, ,,Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի պահանջներով և հաշվի առնելով, որ համայնքի 2015 թվականի բյուջեն կազմվել էր նախնական թվերով, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ Տավուշի մարզպետի թիվ 01/09.1/4892-14 գրությունը՝ նվազագույն աշխատավարձի բարձրացման, էլեկտրաէներգիայի և գազի սակագների թանկացման հետ կապված համայնքում առաջացող լրացուցիչ ծախսերի փոխհատուցման նպատակով ընթացիկ սուբվենցիա տրամադրելու մասին

համայնքի ավագանին որոշում է

Համայնքի ավագանու ,,Համայնքի 2015 թվականի բյուջեն հաստատելու մասին,, 10 դեկտեմբերի 2014 թվականի N 54-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) համայնքի բյուջեի եկամտային և ծախսային մասերն ավելացնել 27323.65 հազար դրամով և հաստատել՝

ա/ բյուջեի եկամտային մասը՝ 224009.45 հազար դրամ,

բ/ բյուջեի ծախսային մասը՝ 224009.45 հազար դրամ:

2) Որոշման N 1 հավելվածում ,,Գույքահարկ,, տողն ավելացնել 1500.0 հազար դրամով, ,,Պետական տուրք,, տողը նվազեցնել 500.0 հազար դրամով: ,,Պաշտոնական դրամաշնորհներ,, բաժնում ,,Դոտացիա,, տողը նվազեցնել 8.4 հազար դրամով և ավելացնել ,,Ընթացիկ սուբվենցիա,, տողը 21830.70 հազար դրամով: Տարեսկզբի ազատ մնացորդը սահմանել 4501.35 հազար դրամ:

3)Որոշման N 2 հավելվածում ,,Տեղական ինքնակառավարման,, տողն ավելացնել 11313.5 հազար դրամով, ,,Կրթություն,, տողը` 3185.0 հազար դրամով, ,,Մշակույթ և սպորտ,, տողը`2475.7 հազար դրամով, ,,Երաժշտական դպրոց, արվեստի դպրոց,, տողը` 2048.1 հազար դրամով, ,,Բարեկարգում, կոմունալ ծառայություն,, տողը` 500.0 հազար դրամով, ,,Այլ մշակութային կազմակերպություններ,, տողը` 1000.0 հազար դրամով, ,,Համայնքի փողոցների լուսավորում, վերանորոգում,, տողը`3300.0 հազար դրամով, ,,Համայնքի փողոցների կապիտալ վերանորոգում,, տողը` 3501.35 հազար դրամով:

Համայնքի ղեկավար Հ. Մանուչարյան

Հավելված 1

Բերդ համայնքի
ավագանու 2015 թվականի
հունվարի 20-ի N 1-Ն որոշման

2015 թվականի համար սահմանված համայնքի եկամտատեսակները

| Հ/հ | ԵԿԱՄՏԱՏԵՍԱԿՆԵՐԸ | Գումարը /Հազ. դրամ/ |
|---|---|---|
| | ՍԵՓԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ | |
| 1 | ՀՈՂԻ ՀԱՐԿ | 5500.00 |
| 2 | ԳՈՒՅՔԱՀԱՐԿ | 17500.00 |
| 3 | ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔ | 3500.00 |
| 4 | ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔ | 3200.00 |
| 5 | ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ | 2200.00 |
| 6 | ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐ | 7500.00 |
| 7 | ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐ | 11000.00 |
| 8 | ՀՈՂԻ ԵՎ ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ | 6000.00 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 56400,00 |
| | ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ | |
| 9 | ԴՈՏԱՑԻԱ | 131396.20 |
| 10 | ՊԱՏՎԻՐԱԿՎԱԾ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | 5346.70 |
| 11 | ԱԶԳԱՅԻՆ ՆՎԱԳԱՐԱՆՆԵՐ | 4534.50 |
| 12 | ԸՆԹԱՑԻԿ ՍՈՒԲՎԵՆՑԻԱ | 21830.70 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 163108.10 |
| 13 | ՏԱՐԵՍԿԶԲԻ ԱԶԱՏ ՄՆԱՑՈՐԴ | 4501.35 |
| 14 | ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ | 4020.23 |
| 15 | ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ | 481.12 |
| | Ա Մ Բ Ո Ղ Ջ Ը | 224009.45 |

Համայնքի ղեկավար Հ. Մանուչարյան

Հավելված 2
Բերդ համայնքի
ավագանու 2015 թվականի
հունվարի 20-ի N 1-Ն որոշման

## Համայնքի տեղական բյուջեից հատկացումներն ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 2015թ.

| Հ/հ | ԾԱԽՍԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ | Նախատեսված գումարը /հազ.դրամ/ |
|---|---|---|
| 1 | ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ | 60880.6 |
| 2 | ԿՐԹՈՒԹՅՈՒՆ | 41090.0 |
| 3 | ՄՇԱԿՈՒՅԹ և ՍՊՈՐՏ | 20322.7 |
| 4 | ԲԵՐԴԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ, ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ | 22408.1 |
| 5 | ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ, ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ | 57500.0 |
| 6 | ԱՅԼ ԾԱԽՍԵՐ | 500.0 |
| 7 | ՀԱՄԱՅՆՔԻ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԼՈՒՍԱՎՈՐՈՒՄ, ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ | 4000.0 |
| 8 | ՀԱՄԱՅՆՔԻ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԿԱՊԻՏԱԼ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ | 4761.35 |
| 9 | ՊԱՏՎԻՐԱԿՎԱԾ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | 5346.7 |
| 10 | ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ | 1800.0 |
| 11 | ԱՅԼ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ | 3500.0 |
| 12 | ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ | 1900.0 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 224009.45 |

Համայնքի ղեկավար Հ. Մանուչարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի
Բերդ համայնք, ք. Բերդ Լ. Բեկի 5, հեռ. /0267/ 2-10-81
berdhamayng@mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ

20 ՀՈՒՆՎԱՐԻ 2015 ԹՎԱԿԱՆ N 2-Ա

## ,,ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴԻ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ,, ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՀՈՂԱՄԱՍ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով, ՀՀ հողային օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

համայնքի ավագանին որոշում է.

Բերդ քաղաքի Մաշտոցի 14/3 հասցեում գտնվող ,,Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդի թիվ 3 հիմնական դպրոց հանրակրթական ուսումնական հաստատություն,, պետական ոչ առևտրային կազմակերպությանը, Բերդ համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասերից, անհատույց /մշտական/ օգտագործման տրամադրել 0.98377 հա մակերեսով հողամաս՝ դպրոցի գործունեությունն իրականացնելու համար:

Համայնքի ղեկավար Հ. Մանուչարյան